

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Գնահատման հաշվետվություն

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան, Արամի փողոց 54,
54/1, 54/3, հասցեներում հուշարձան շենքի ամրակապման,
վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացման
նախատեսվող գործունեության

Կառուցապատող՝

<<Մեդ Հաուզ>> ՓԲԸ

Կատարող

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.2	Հապավումներ	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր	7
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	14
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	14
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ	15
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա	17
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	18
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	20
2.1	ՖԻԶԻԿԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	20
2.2	ԿԼԻՄԱՆ	46
2.3	Ջրային ռեսուրսներ	53
2.4	Հողերի նկարագիրը	55
2.5	Հիմնային աշխատանքներ	55
2.6	Կենսաբազմազանություն	56
2.8	Թափոնների կառավարում	58
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	59
3.1	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	59
3.2	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	60
3.3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	60
3.3.1	ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	60
3.3.2	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	61
3.3.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	61
3.3.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	62
3.3.5	ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	64
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	67
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	68
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	71
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	72
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	73

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ <<Մեղ Հաուզ>> ՓԲԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական
հասցեն՝ Ք.Երևան Արամի 54

1.4 Ձեռնարկողի փաստացի
գործունեության հասցեն՝ Ք.Երևան Արամի 54

1.5 Նախատեսվող գործունեության
վարչական տարածքը՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան, Արամի փողոց 54, 54/1, 54/3, հասցեներում հուշարձան շենքի ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացումը:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի շենքի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

22. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀԾՆ 22-04-2014 <<Պաշտպանություն աղմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:

23. ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 08-ի N 108-Ն որոշումը:

24. ՀՀ կառավարության 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշումը՝ ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Երևան քաղաքի, Արամի փողոցի 54 հասցեում գտնվող շենքի ամրակայման, վերականգնման փոփոխման և կցակառույցի վերակառուցման էսքիզային նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից 2020 թվականի դեկտեմբերի 30-ի տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի: Սեփականության վկայականի հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, «ՄԵԴ ԶԱՌԷ2» ՓԲ ընկերության կողմից տրված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման (այդ թվում՝ փոփոխման և տեղափոխման) աշխատանքների նախագծային առաջադրանքի, «ՍԵՅՍՄԱՎԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ կողմից 27 փետրվարի 2023թ. կազմված Արամի փողոց N 54 հասցեում շինության տեխնիկական վիճակի վերակառուցման հնարավորության վերաբերյալ եզրակացության, արխիվային, տեղում կատարած չափագրման ու ուսումնասիրման աշխատանքների, գոյություն ունեցող վիճակի ամրագրված լուսանկարային նյութերի հիման վրա: Համաձայն սեփականության իրավունքի գրանցման վկայականի շինությունը զբաղեցնում է 0,1165 հա մակերես, իսկ դրան կից 0,0547 հա կառուցապատումից ազատ տարածք է: ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին N 1616-Ն որոշմամբ հաստատված ցանկում շենքը ընդգրկվել է որպես հանրապետական նշանակության հուշարձան (պետ. ցուցիչ՝ 1.6.206.7): Նախագծվող շինությունը գտնվում է Երևանի Կենտրոն վարչական շրջանի Արամի և Կողբացի փողոցների հատման մասում, կարմիր գծի վրա, բնակելի և հասարակական կառուցապատման գոտում: Տարածքի հարևանությամբ գոյություն ունեն բնակելի և հասարակական նշանակության շենքեր: Ամբողջական համալիրը եզրային Ո-ձևին մոտ հատակագծով արտաքին չափերով կազմում է 45.0-69.6 մետր, այն երեք հարկանի է, մասամբ նկուղային հարկով, տեղադրված է համեմատաբար հարթ տարածքի վրա: Շինության բացարձակ բարձրությունը մինչև վերին քիվի նիշը կազմում է 17,6 մետր: Առաջին հարկի հատակի նիշը բարձր է մայթի նիշից մոտ 0.65-0.5 մետր: Համալիրի կոնստրուկտիվ համակարգը լուծված է լայնական և երկայնական ուղղություններով տեղադրված համատեղ աշխատող կրող և կապող քարային պատերի միջոցով և միջհարկային ծածկերով ու վերնածածկով: Շինության հիմքերը ժապավենային են, իրականացվել են խամբարաբետոնով, 0.8-1.2 մետր հասությամբ պատերն իրականացված են տեղական սև գույնի տուֆ քարից՝ «միդիս» տիպի շարվածքով, հիմնականում կիրավազային շաղախի կիրառմամբ (բետոնի շաղախը կիրառվել է բակային հատվածում գտնվող թևում): Արամի և Կողբացի փողոցի կողմից շենքի պատերն ունեն կամարածև բացվածքներ և արտաքին պատերի հետ ստեղծում են կոշտ համակարգ: Բացվածքների

բարավորները փականաքարային են, ուղղագիծ և կորագիծ ուրվագծերով: Ծածկերն իրականացված են փայտից և միաձուլ երկաթբետոնից: Ուղղաձիգ կապն ապահովում են չորս սանդուղքների միջոցով, որոնք իրականացված են պողպատե թեֆախեծաններով, միաձուլ երկաթբետոնի հարթակներով և հավաքովի երկաթբետոնից պատրաստված հատավոր աստիճաններից: Միջնապատերն իրականացված են պեմզաբետոնից և փայտի կոնստրուկցիաներով: Փայտի կրող կոնստրուկցիաներով տանիքը լանջավոր է՝ արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ: Տանիքի բացարձակ բարձրությունը մինչև վերին (պիպի) նիշը կազմում է մոտ 20 մ: Բակում կա հիմնական շինությանը կից կառուցված նոր շինություն, որը բաղկացած է երկու մասից՝ երկու և մեկ հարկանի հատվածներից: Կոնստրուկտիվ սխեման լուծված է միաձուլ ե/բ կարկասից: 0.00 նիշից բարձր պատերը քարից են (կանոնավոր քարերի շարվածք), որը հանդիսանում է որպես կարկասի լցվածք: Սյուների առավելագույն քայլը 8,3 մ է: Սյուները 40x40սմ կտրվածքով են, պարզունակները 40x55սմ: Ծածկերը հավաքովի սալերից են 22 սմ հաստությամբ՝ պարփակված պարագծով 40x55սմ կտրվածքների հեծաններով: Հիմքերը ժապավենային են՝ 60x50սմ կտրվածքով, միաձուլ ե/բ են: Առաջին հարկի բարձրությունը 4,4 մ: Երկրորդ հարկի բարձրությունը 4,5 մ: Այժմ համալիրի գլխավոր մասնաշենքը (Արամի փողոցի վրա) չի գործում, իսկ մյուս հատվածը գործում է որպես կլինիկական հիվանդանոց: Ըստ արխիվային նյութերի պարզվել է, որ շենքը կառուցվել է 1902թ.՝ որպես բանկի Երևանի բաժանմունք: Շենքը նախագծվել է ճարտարապետներ Ն. Կիտկինի և Վ. Միրզոյանի կողմից: Այն գտնվում էր Ցարսկայա (Արամի) և Կարավանսարայսկայա (Կողբացի) փողոցների հատման մասում, բնակելի կառուցապատման գոտում: Ուսումնասիրելով համապատասխան ժամանակաշրջանների Երևան քաղաքի գլխավոր հատակագծերը՝ կարող ենք ենթադրել, որ բանկի շինությունը ուներ բակային հատված, որում տեղադրված էին օժանդակ շինություններ: Մուտքը դեպի բակ կազմակերպված էր Ցարսկայա փողոցի կողմից՝ դարպասի միջոցով: Կարավանսարայսկայա փողոցի կողմից գոյություն ուներ ցանկապատ: Չափագրական և ուսումնասիրման արդյունքում ընդհանուր համալիրից առանձնացվել է բանկի շինությունը և նախագծում տրվել է իր սկզբնական տեսքը, հատակագծային լուծումները և ապամոտաժված հատվածները: Շինությունն ունեցել է եզրային ուղղանկյունու մոտ հատակագիծ, արտաքին առավելագույն չափերով կազմում է 27.5-45.0 մետր: Հաշվի առնելով 1902 թվականից փողոցի նիշի բարձրացումը /մոտ 50 սմ/՝ կարող ենք ենթադրել, որ առաջին հարկի հատակի նիշը բարձր է եղել մայրի նիշից մոտ 0.65-0.5 մ, իսկ շինության բացարձակ բարձրությունը մինչև վերին քիվի նիշը կազմում էր 12.9 մետր: Շենքն իր սկզբնական վիճակում իրենից ներկայացնում էր երկհարկանի դասական ճարտարապետական ոճի կառույց: Շենքի ճակատները իրականացված են սրբատաշ տեղական սև տուֆ քարից: Շենքի երկրորդ հարկը ձևավորված է կորնթական խոյակներով, որմնասյուներով: Շենքն ունի հարուստ ձևավորված ճակտոններ, ֆրիզ, քիվ և կամարաձև պատուհաններ: Ցարսկայա փողոցի կողմից՝ գլխավոր ճակատում, կան 3 բարձակային շքապատշգամբներ: Մինչ այժմ պահպանվել է պատշգամբների հեծանների՝ փայտից իրականացված ձևավորումը: Շենքի գլխավոր մուտքը (շքամուտքը) կազմակերպված էր Ցարսկայա փողոցի կողմից: Դռները և պատուհանները իրականացված են փայտից: Երկրորդ հարկի պատուհանները կամարաձև են: Կողային պատուհանը ունի նախշազարդ տարրեր: Մուտքերի դռների հարդարանքում օգտագործվել են ոճավոր և բուսական

զարդաբանդակներ: Բանկի գործունեությունն ապահովելու համար երկրորդ հարկի մոտ 6.3 մետր բարձրության հաշվին տեղադրված էր պահոց (գանձապահարան): Այն բանի կողմից ձգվում էր շենքի երկարությամբ և ուներ 2 մուտք: Նշված լուծումն ապահովում էր առավել անվտանգություն և բնորոշ էր այդ ժամանակաշրջանի բանկային կառույցներին: Պահպանված պահոցի բարձրությունը կազմում է 1.8 մետր: Կողբացի փողոցի կողմից երեք սենյակներում առաջին և երկրորդ հարկերը թաղակապ են: Շինության կոնստրուկտիվ համակարգը լուծված է լայնական և երկայնական ուղղություններով տեղադրված համատեղ աշխատող, կրող և կապող քարային պատերի միջոցով և միջհարկային ծածկերով ու վերնածածկով: Բոլոր բացվածքների բարավորները փականաքարային են, ուղղագիծ և կորագիծ ուրվագծերով: Ծածկերն իրականացված են մետաղական կրող տարրերից (երկտավրներից) և փայտե գերաններից: Տանիքի ծածկույթը՝ մետաղական թիթեղ է: 1926 թվականին շենքը վերածվում է քաղաքային մանկական հիվանդանոցի: Հետագայում 1934 թվականին ճարտարապետ Ն. Բունիաթյանի նախագծով հիվանդանոցի շենքը վերակառուցվում է և ընդլայնվում: Նախագծով իրականացվել է գոյություն ունեցող շենքի վերնահարկի և Արամի փող. կողմից ծավալի կառուցում, իսկ Տեր-Գաբրիելյանի (Կողբացի) փողոցի կողմից երեք հարկանի շինություն: Արխիվային նյութերի, չափագրման և ուսումնասիրման աշխատանքների վերլուծության հիման վրա նախագծում ներկայացված են համալիրի հատակագծային և ծավալատարածական փոփոխություններն՝ ըստ շինարարական փուլերի և ժամանակաշրջանների: Վերնահարկի կառուցման համար ապամոնտաժվել է երկհարկանի շինության վերին հատվածը (մինչև քիվի եզրագիծը): Հավանաբար ճակտոնների և վերին հատվածի ապամոնտաժված քարերն օգտագործվել են վերնահարկի կառուցման համար: Արամի փողոցի կողմից ընդլայնումը իրականացվել է բանկի դարպասի պատի տեղում (տեղում պահպանվել է պատի վերջնամասի հատվածը): Դեպի բակ մուտք ապահովելու համար ընդլայնվող ծավալում նախատեսվել է դարպաս, որը հետագայում փակվել է: Երրորդ հարկը կառուցվել է դասական ճարտարապետական ոճով: Արամի փողոցի կողմից շենքի ճակատի երրորդ հարկի մի հատվածը ձևավորված է հունական խոյակներով, որմնասյուներով: Գլխավոր մուտքի և ճակատի աջակողմյան հատվածամասերում իրականացվել են բարձակային պատշգամբներ: Շենքն ավարտվում է քիվով և երկու եռանկյունաձև ճակտոններով: Կողային ճակատում իրականացվել են ևս երկու պատշգամբներ, որից մեկը ապակեպատված է: Բացվածքների բարավորները փականաքարային են: Գլխավոր ճակատները հիմնականում պահպանվել են իրենց սկզբնական տեսքով: Չափագրության և ուսումնասիրման աշխատանքների գծագրական նյութերում արձանագրվել են ճակատներում առկա կարանները, ինչպես նաև համալիրի հատակագծային լուծումների և շինարարական նյութերի օգտագործման հիման վրա բացահայտվել են համալիրի ընդլայնման չորս փուլերը: Բակում հիմնական շինությանից 2002 թ. կառուցված անավարտ շինությունը բաղկացած է երկու մասերից՝ երկու և մեկ հարկանի հատվածներից: Կառույցի կոնստրուկտիվ համակարգը կարկասային է, իսկ ծածկերը հավաքովի ե/բ սալերից: Պատերն իրականացված են կարկասի լցվածքի ձևով, ունեն 400 մմ հաստություն, իրականացված են տուֆ քարի մանրահատ բլոկներից: Տանիքը միալանջ է, արտաքին ազատ ջրահեռացմամբ, ծպեղային և կավարամածային համակարգն իրականացված է փայտի կոնստրուկցիաներով և ծածկված է կղմինդրով: Նախագծով նախատեսվող շինությունների ամրակայման, վերականգնման և փոփոխման

աշխատանքները. Երևան քաղաքի Կենտրոնի Արամի փողոցի վրա Մեսրոպ Մաշտոցի և Կողբացի փողոցների միջանկյալ հատվածում կառուցապատված 20-րդ սկզբի և թամանյանական ժամանակաշրջանի հիվանդանոցի շինություններով (հուշարձան-շենքերով) կառուցապատումը ձևավորում են Երևան քաղաքի կարևոր հատվածի պատմական միջավայրը: Ուստի Արամի փողոցի այդ հատվածի պատմական միջավայրի պահպանումը, հուշարձանների քաղաքաշինական դերի ամրագրումը առաջնային խնդիր է: Առաջնորդվելով այդ սկզբունքներով՝ նախագծով նոր տարածքներ ստանալու համար առաջարկվում է հուշարձանի տանիքային հատվածում մետաղական կրող կոնստրուկցիաներով իրականացնել վերնահարկ և բացօթյա հարթակ, որում նախատեսվում է կազմակերպել սրճարան, իսկ տանիքի ծավալի մեջ ժամանցային տարածքներ (երեխաների համար խաղասրահներ): Նշված վերնահարկը նախագծվել է գլխավոր ճակատից 8,0 մետր ետնահանջով, տանիքի բարձրությամբ, որի ծավալը գլխավոր պողոտայից և Կողբացի փողոցի կողմից չի ընկալվում: Այդպիսի լուծման արդյունքում չեն խաթարվի շենքի գլխավոր ճակատի ճարտարապետագեղարվեստական կերպարային (հորինվածքային) լուծումները: Ներքին տարածքների կազմակերպման մշակման ընթացքում հաշվի են առնվել շինության 1902 թ. սկզբնական և հետագայում դրա գործառնական փոփոխման և զարգացման արդյունքում իրականացված հատակագծային, ճարտարապետական ու ծավալատարածական փոփոխությունները: Հաշվի առնելով շենքի գոյություն ունեցող քաղաքաշինական իրավիճակը, տեխնիկական վիճակը՝ շենքի առևտրի կենտրոնի կազմակերպման նախագծի վերականգնման, ուժեղացման, հարմարեցման (ադապտացիայի) և փոփոխման լուծումները մշակվել են ուսումնասիրման արդյունքում բացահայտված շենքի արժեքավոր ճարտարապետական կերպարի (դիմագծի), հատակագծային հորինվածքի և տարրերի պահպանմամբ: Այսպես 1934 թվականին ճարտարապետ Ն. Բունիաթյանի նախագծով Արամի փողոցի կողմից ձախակողմյան հատվածում իրականացված ծավալում դեպի բակ մուտք գործելու համար բացվածքը փակվել է: Նախագծով նախատեսվում է այն վերաբացել և բերել նախկին տեսքի, իսկ մեկ հարկանի ներքին տարածքն օգտագործել որպես սրճարան: 1902 թվականին կառուցված նախկինում բանկի Երևանի բաժանմունքի գանձապահարանի տարածքը մանկական հիվանդանոցի վերածումից հետո չի օտագործվել իր ցածր (1,75 մ) բարձրության պատճառով: Երկրորդ հարկի 6.3 մետր բարձրության և նրանում տեղադրված գանձապահարանի հաշվին առաջարկվում է մասնակի իրականացնել լրացուցիչ հարկ, միաժամանակ առավել արժեքավոր թաղակապ տարածքների հատվածը վերականգնվում է և պահպանվում է երկու հարկով՝ իր սկզբնական վիճակով: Շինության հիմքերի ուժեղացման արդյունքում, ինչպես նաև առաջին հարկի հատակի նիշի բարձրացմամբ (45 սմ) հնարավոր է ստանալ նկուղային հարկ, որը նախատեսվում է օգտագործել որպես օժանդակ տարածք: Նշված նկուղային տարածքի իրականացման համար նախատեսվում է կատարել գոյություն ունեցող հիմքերի վիճակի վերաբերյալ լրացուցիչ համապատասխան ուսումնասիրման աշխատանքներ: Առևտրի կենտրոնի այցելուների, ինչպես նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու անհրաժեշտ պայմանների ապահովման համար շինությունում գլխավոր աստիճանավանդակի մոտ նախատեսվում է իրականացնել լրացուցիչ վերելակ: Համալիրի բակային հատվածում 2002 թ. (նախկինում կառուցված կցակառույցի տեղում) իրականացվել է 1-2 հարկանի նոր

շինություն: Այդ ժամանակ, հավանաբար, դեռևս հուշարձանների լիարժեք ցուցակ չլիներ և պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության սկզբունքների ոչ լիարժեք լիներ և հետևանքով՝ Երևանի բաղաբապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքում ու համաձայնեցված նախագծում ուշադրությունից դուրս են մնացել շինության հաջորդական զարգացման սկզբունքները և առանձին փուլերում ձեռք բերված ճարտարապետական որակական հատկանիշների պահպանման խնդիրները: Հաշվի առնելով վերոգրյալ բացթողումները՝ նախագծով նախատեսվում է կատարել կցակառույցի վերակառուցման աշխատանքներ, որոնց նպատակն է հուշարձանի օգտագործման և առևտրի կենտրոնի ստեղծման միասնական կարգավորման խնդիրներից ելնելով, ապահովել պատմականորեն ձևավորված համալիրի հետ նոր կառույցի ներդաշնակությունը և ապահովել հորինվածքային փոխկապակցվածությունը: Հարկ է նշել, որ առևտրի կենտրոնի կազմակերպման և սպասարկման համար անհրաժեշտ են օժանդակ տարածքներ (պահեստներ, վարչական տարածքներ և այլ): Կցակառույցի վերակառուցմամբ վերոգրյալ օժանդակ տարածքները տեղակայվելու են կցակառույցում, իսկ հուշարձանի արժեքավոր օգտակար տարածքներն օգտագործվելու են առևտրի սրահների կազմակերպման համար՝ ցուցադրելով այցելուներին հուշարձանի 20-րդ դարի սկզբի ոճով հարդարված ներքին տարածքները: Մոտ 10 տարի շենքի չշահագործման արդյունքում գլխավոր ճակատի գոյություն ունեցող փայտե պատուհանները խարխուլ վիճակում են: Նախնական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ պատուհանների մեծ մասը հնարավոր է հիմնանորոգել, իսկ մյուսները վերստեղծմամբ փոխարինել նորով: Դռները նույնպես խարխուլված վիճակում են, փայտե տարրերը դեֆորմացված են և վերականգնումը բացառելու դեպքում վերստեղծվելու են՝ ըստ չափագրական գծագրերի՝ օգտագործելով վրայի դեկորատիվ տարրերը: Տանիքի փայտի կրող կոնստրուկցիաները նախատեսվում է ապամոնտաժել և այն իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով՝ պահպանելով դրա ձևը, թեթվությունը և գազաթի բարձրությունը: Վերականգնման համար բավարար վիճակում գտնվող գլխավոր մուտքի ճակատի պատի վրա ամրացված որմնաքանդակի և գլխավոր մուտքի մոտ պահպանված «Մոր ու մանկան» քանդակը նախատեսվում է տեղադրել ներքին տարածքի առաջին հարկում՝ համալիրի պատմությունը ներկայացնող սրահում: Առաջարկվում է այն կանաչապատել և կազմակերպել ավտոկայանատեղի 18 մեքենայի համար: Միաժամանակ այդ տարածքից ապահովվում է առևտրի կենտրոնի աշխատակիցների և սպասարկման համար մուտքը:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Հողի մակերես 1724.4 քմ;

Հուշարձան շենքի կառուցապատման մակերեսը՝ 857 քմ;

Կցակառույցի կառուցապատման մակերեսը՝ 397.4 քմ;

Հարկերի գումարային շինարարական մակերեսը՝ 5423 քմ;

Անջրանցիկ մակերեսը – 470 քմ

Մեքենաների կայանատեղի 17 տեղ

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի;
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել:

Զեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով:

ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.-Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ արտածումը կատարվում է արտածման համակարգերի միջոցով: Օդահեռացումը կատարվում է երկու զոնաններից՝ վերևի և ներքևի:

Հասարակական տարածքներից օդի արտածումը բնական է: Բոլոր սան. անգույցների հորանների վրա վերևում նախատեսվում են դեֆլեկտորներ:

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնոդությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնոդությունը ծրագրվում է 39 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինարարությունը բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով: Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:
2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի՝ կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:
3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն, սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:
2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 25 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

- Ավտովերամբարձ կռուկ **КС-65713-1 «Галичанин»**, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ **СБ-69Б**
- Բեռնատար ինքնաթափ **МА3** 5550, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Շարժական կոմպրեսոր **ЗИФ - 55 В**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էլ.եռակցման սարք **СТН** 500, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էքսկավատոր Hyundai 170W, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Բետոնամղիչ ավտոմոբիլ СБ-126
- Կայմային վերհան ПМГ - 1Б - 500
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղծագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է ամսեկան մեկ մարդու հաշվարկով 7 կգ $7 \times 25 \times 39 / 1000 = 6,8$ տ եւ շինարարական աղբն է մոտ 370 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 22 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1170 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 22 \times 0.025) \times 1170 = 700 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 400 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 800

$$U_1 = 400 \times 0.0015 \times 800 = 480 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1180 խմ/շին. ժամ:

Շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը նախատեսվում է Մաշտոցի պողոտայով անցնող D= 400մմ ջրատարից, կոյուղին նախատեսվում է միացնել Ե.Կողմացի փողոցով անցնող D= 400մմ կոյուղատարին, հեղեղատարը՝ Ե.Կողմացի փողոցով անցնող D= 400մմ հեղեղատարին:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Տարածքում նախատեսվում է 25 աշխատողի համար տեղադրել 3 բիոգուգարան: Բիոգուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները, վերացնում է միկրոբներին և չեզոքացնում հոտերը: Բիոգուգարանները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են մատակարար ընկերության կողմից:

Շենքի գազամատակարարումը 116խմ/ժ ծախսով նախատեսվում է համաձայն տեխնիկական պայմանի ԳԲԿ Ջրվեժ սնող D= 300մմ կողմնատար գազատարից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում շենքի էլեկտրամատակարարումը 500 կՎԱ դրվածքային հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, կառուցելով նոր ենթակայան: Ենթակայանը նախատեսվում է շենքի բակային հատվածում:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի, Արամի փողոց 54, 54/1, 54/3 հասցեներում: Տարածքում առկա է 2425.7 քմ պոլիկլինիկա, որից 235.8 քմ 50-80 տոկոս ավարտվածության աստիճանի, կառուցապատումից ազատ տարածք , վերելակ՝ 5.7 քմ:

Կից գտնվում են այլ բնակելի և հասարակական շենք շինություններ:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.068.000 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը ներկայացնում է Արարատյան ակունուլյատիվ գոգավորության, հյուսիս-արևմտյան վերջավորության մի հատված, որտեղ ռելիեֆը հարթ է և քաղաքաշինական աշխատանքների հետևանքով ենթարկվել է որոշ փոփոխությունների: Հետազոտվող տարածքում ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 989,0 989,3 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տեղամասում առկա են գրունտային ջրեր, որոնք ունեն ընդհանուր տարածում, սակայն դրանց հորիզոնը մինչև 12 մետր խորությամբ փորված հորատանցքերով չի հասնում: Համաձայն ունեցած ֆոնդային և արխիվային նյութերի տվյալների՝ գրունտային ջրերը գտնվում են 19-20 մետր խորություններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման, լաբորատոր և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի վերին պլիոցեն-

պլեյստոցեն դարակարգի լճագետային նստվածքները, որոնց ծածկում են էոպլեյստոցեն դարակարգի հրաբխային ապարները՝ տուֆերը, վերջիններիս էլ ծածկում են ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ և տեխնոգեն առաջացումները: Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով (վերնից-ներքև)։

Շերտ 1, Լիցքեր՝ կազմված խճից, խճավազից, մասամբ շինարարական աղբից և մինչև 30-40% կավավազներից: Գրունտը խոնավ է և ունի լայն տարածում: Շերտի հորատված հզորությունը 2,5-ից-3,5 մետր է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի III կարգ է:

Շերտ 2, Խճախճավազային և ճալաքարակոպճային գրունտներ, հազվադեպ մանրագլա քարերով, խիտ կազմվածքի, ավազների ենթաշերտերով, կավավազային լցոնով 25-30%: Բեկորային նյութը տարակազմ է, չհղկված, թույլ և միջին հղկվածության: Գրունտը խոնավ է: Շերտը համատարած է, իսկ հորատված հզորությունը 3,3-3,6 մետր է: Ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ նստվածքներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի IV կարգ է:

Շերտ 3, Տուֆեր սև, հողմնահարված, քայքայված, փխրուն, փշրված մինչև խճային և ավազային ֆրակցիայի, խոնավ: Շերտը համատարած է, իսկ հորատված հզորությունը 2,8-3,5 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի, էոպլեյստոցեն դարակարգի հրաբխային հոսքեր են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի V կարգ է:

Շերտ 4, Ճալաքարային գրունտ, կոպիճի պարունակությամբ, խիտ կազմվածքի, կավավազային լցոնով 25-30%, խոնավ: Բեկորային նյութը տարակազմ է, լավ, միջին և թույլ հղկվածության, իսկ լցոնը ձիգ պլաստիկ կոնսիստենցիայի: Շերտը համատարած է, իսկ հորատված առավելագույն հզորությունը 1,4 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի վերին պլիոցեն-պլեյստոցեն դարակարգի լճագետային նստվածքներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի IV կարգ է:

Շերտ 5, Ավազակավեր բաց շագանակագույն, խոնավ, ձիգ պլաստիկ կոնսիստենցիայի, խիտ: Շերտի հորատված հզորությունը 1,0 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի վերին պլիոցեն-պլեյստոցեն դարակարգի լճագետային նստվածքներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի III կարգ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի 54 հասցեում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 989,0-989,3մետրերի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 5 տարբեր շերտերով, որոնց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են 3-րդ և 4-րդ գլուխներում:
- Տեղամասում մինչև 12 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրերի հորիզոնը չի հատվել: Համաձայն ունեցած ֆոնդային և արխիվային նյութերի տվյալների գրունտային ջրերը գտնվում են 19-20 մետր խորություններում:
- Գոյություն ունեցող կառույցի հիմնատակի գրունտներ, համաձայն բացված հետախուզահորերի, հանդիսանում են շերտ 2-ի (խճախճավազային և ճալաքարակոպճային գրունտներ, կավավազային լցոնով 25-30%) գրունտները:
- Նախագծվող կառույցի համար որպես հիմնատակի գրունտներ նույնպես առաջարկվում է շերտ 2-ի (խճախճավազային և ճալաքարակոպճային գրունտներ, կավավազային լցոնով 25-30%) գրունտները:
- Համաձայն ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Երևան քաղաքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, գրունտի սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները կազմում են 0,4g:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 մետր:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:
- Ուսումնասիրվող տեղամասի գրունտներն ըստ սեյսմիկ հատկությունների 2-րդ կարգ են:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:
- Ուսումնասիրվող տեղամասում կառույցի հիմքի փոստրակը բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան եզրակացության տրամադրումը (ԱԿՏ) պարտադիր է:

Ինժեներ երկրաբան



Ա. Թորոյան

Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձաններ

105.	«Անանուն» սյունաձև բազալտներ	բաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
106.	«Անանուն» սյունաձև բազալտներ	բաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ

Կենտրոն վարչական շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

հուշարձան	կառուցված
Ակադեմիայի համակառույց. Գիտությունների Ազգային Ակադեմիա	1958 թվական, 1970-ական թվականներ
Գլխավոր մասնաշենք	1958 թվական
Բարձրաքանդակներ Գիտության երախտավորներին	1958 թվական
Պաննոներ «Հայ գիտության կաճառներ». («Մեսրոպ Մաշտոց», «Մովսես Խորենացի»)	1958 թվական
Ինստիտուտի շենք. Երկրաբանական գիտությունների ինստիտուտը	1958 թվական
Ինստիտուտի շենք. Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտները	1958 թվական
Ակադեմիայի շենք. Հայկական գյուղատնտեսական ակադեմիան	1932 թվական, 1940 թվական, 1956 թվական
Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհված գյուղատնտեսական ինստիտուտի դասախոսներին և ուսանողներին	1985 թվական
Առանձնատուն Հայկանուշ Դանիելյանի	1947 թվական
Առանձնատուն Աղասի Խանջյանի (Ժողկոմխորհի)	1920-ական թվականներ
Առանձնատուն ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանի	1939 թվական
Աստղադիտարանի շենք	1926 թվական
Արդյունաբերական համակառույց. «Արարատ» գինեգործական արդյունաբերության միավորման համալիրը	1887-1910 թվականներ, 1938 թվական, 1945-1963 թվականներ

Իուշարձան	կառուցված
Գործարանի համալիր. Շուստովի (Թաիրյանի) Գինու-կոնյակի գործարանը	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Գինու մառան	1887 թվական
Խմորման արտադրամասի մասնաշենք	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Կոնյակի մառաններ	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Պահեստի մասնաշենք	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Սպիրտի գտման մասնաշենք	1907 թվական
Տակառագործական արհեստանոցի մասնաշենք	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
«Արարատ» գինեգործական արդյունաբերության միավորման մառանների շենք	1937-1961 թվականներ
Բարձրաքանդակներ	1961 թվական
Հուշարձան՝ Գինու կոմբինատի հիմնադրման 100-ամյակին	1977 թվական
Արդյունաբերական շենք. «Արարատ» արդյունաբերական միավորման կոնյակի գործարանի գլխավոր մասնաշենքը (Երևանի կոնյակի գործարան)	1944 թվական
Բարձրաքանդակներ	1975 թվական
Խաչքար	1579 թվական
Հուշարձան՝ Մարգար Սեդրակյանի	1975 թվական
Արվեստանոց-թանգարան Մինաս Ավետիսյանի	1975 թվական
Արվեստանոց-թանգարան Գևորգ Գրիգորյանի (Ջիոտտո)	1980 թվական
Բանկի շենք. Պետական բանկ	1933 թվական
Բարձրաքանդակ «Կժով աղջիկը»	1939 թվական
Բարձրաքանդակ «Չայկովսկի»	1982 թվական

հուշարձան	կառուցված
Բերդեն Ծիծեռնակաբերդ	մ.թ.ա. 2-1 հզ, 3-13-րդ դարեր
Բնակելի տուն	1930 թվական
Բնակելի տուն	1927 թվական
Բնակելի տուն՝ «Հօկ»-ի	1928 թվական
Տուն-թանգարան Դերենիկ Դեմիրճյանի	1977 թվական
Հուշակոթող՝ Դերենիկ Դեմիրճյանի	1977 թվական
Բնակելի տուն	1950-ական թվականներ
Բնակելի տուն «Պրոֆեսորների»	1934 թվական
Հուշակոթող «Հայ մշակույթի երախտավորներ»	1968 թվական
Բնակելի տուն Վլադիմիր Բրաժնիկովի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Բաբանների	19-20-րդ դարեր
Բնակելի տուն	1942 թվական
Բնակելի տուն	19-20-րդ դարեր
Բնակելի տուն	19-րդ դար
Բնակելի տուն Արտեմ Յարայանի	19-20-րդ դարեր
Բնակելի տուն	20-րդ դարի սկզբ
Բնակելի տուն	1935 թվական
Բնակելի տուն	1948 թվական
Բնակելի տուն	18-րդ դար
Բնակելի տուն	1950-ական թվականներ
Բնակելի տուն Աֆրիկյանների (ամառանոց)	20-րդ դարի սկիզբ
Գինու մառան	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ

հուշարձան	կառուցված
Խաչքար Սուքիասի	1586 թվական
Բնակելի տուն	19-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Սինթետիկ կաուչուկի գործարանի	1934-1938 թվականներ
Բնակելի տուն Վահան Պապոյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն	
Բնակելի տուն	
Բնակելի տուն	1960 թվական
Հուշակոթող Վիկտոր Համբարձումյանին	1996 թվական
Բնակելի տուն	1939 թվական
Հուշակոթող՝ Հայկ Գյուլիքեխյանին	1975 թվական
Հուշակոթող՝ Ստեփան Մալխասյանցին	1974 թվական
Բնակելի տուն	1929 թվական
Բնակելի տուն	1941 թվական
Տուն-թանգարան Երվանդ Քոչարի	1984 թվական
Բնակելի տուն «Իլլիչ»	1932 թվական
Բնակելի տուն «Դերասանների»	1941 թվական
Բնակելի տուն	1957 թվական
Բնակելի տուն	1957 թվական
Բնակելի տուն	1925-1927 թվականներ
Հուշակոթող՝ Ալեքսանդր Սպենդիարյանի	1979 թվական
Տուն-թանգարան Ալեքսանդր Սպենդիարյանի	1967 թվական
Բնակելի տուն	1925-1927 թվականներ
Բնակելի տուն	1938 թվական

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն	1927 թվական
Բնակելի տուն Գ. Բոգոյուբսկու	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Անասնաբուժական - անասնաբուժական ինստիտուտի դասավանդողների	1931 թվական
Բնակելի տուն	1927 թվական
Հուշակոթող՝ Ակսել Բակունցի	1970 թվական
Բնակելի տուն ԵՐՀԷԿ-ի («Շախմատային»)	1932 թվական
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	1927 թվական
Բնակելի տուն	1951 թվական
Բնակելի տուն	1928 թվական
Բնակելի տուն	1933 թվական
Բնակելի տուն «Մասնագետների»	1937 թվական
Հուշակոթող՝ Մանուկ Աբեղյանի	1965 թվական
Հուշակոթող՝ Հակոբ Մանանդյանի	1965 թվական
Բնակելի տուն Ս. Մարգարյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն	1952 թվական
Գերեզման Սիմոն Չափյանի	1957 թվական
Գերեզման Մայիսյան ապստամբության հերոսների (Ստեփան Ալավերդյան, Սարգիս Մուսայեյան, Բագրատ Ղարիբջանյան)	1921 թվական
Գերեզման Լիպարիտ Միսչյանի	1921 թվական, 1971 թվական

Խուշարձան	կառուցված
Գրադարանի շենք. Ազգային գրադարանի գլխավոր մասնաշենքը	1928-1940 թվականներ
Գրքի պալատի շենքի Տերյան փող. հատվածը	1940 թվական, 1960 թվական
Հուշարձան «Բանվոր և կոլտնտեսական»	1956 թվական
Հուշարձան՝ Հակոբ Մեղապարտի	1987 թվական
Դամբարան	1319 թվական
Դպրոցի շենք. Հրաչյա Աճառյանի անվան դպրոցը	1937-1938 թվականներ
Հուշարձան Հրաչյա Աճառյանի	1970 թվական
Դպրոցի շենք. Ստեփան Շահումյանի անվան դպրոցը	1928 թվական 1932 թվական
Հուշարձան Ստեփան Շահումյանի	1957 թվական
Դպրոցի շենք. Եղիշե Չարեցի անվան դպրոցը	1952 թվական
Հուշարձան՝ Եղիշե Չարենցի	1957 թվական
Եկեղեցական համալիր Չորավոր Սբ. Աստվածածին	17-19-րդ դարեր
Եկեղեցի Չորավոր Սբ. Աստվածածին	1693 թվական
Խաչքար Էլիագի	17-րդ դար
Խաչքար Մովսեսի	17-րդ դար
Խաչքար Խոջա Փանոսի	1693 թվական
Խաչքար Հովհաննեսի	1693 թվական
Խաչքար Հուրիխանի	1693 թվական
Գավիթ	1693 թվական
Խաչքար	15-րդ դար
Խաչքար	15-րդ դար
Գերեզմանոց	19-րդ դար

հուշարձան	կառուցված
Խաչքար Աղեքսանդրի	18 դար
Խաչքար Անդրեասի, Արիստակեսի և Փարու	18 դար
Խաչքար Գիրխասի	1710 թվական
Խաչքար Գրիգորի, Մկրտումի, Մալխասի	18 դար
Խաչքար Խանումի	18 դար
Խաչքար Մարգարի և այլոց	18 դար
Խաչքար Մարկոսի	18 դար
Խաչքար Մելիք Նազի և ծնողների	18 դար
Խաչքար Նիկողոսի, Լելու	18 դար
Խաչքար Սատարի, Խանբեկու	18 դար
Խաչքար Սպահանցի Խաչատուրի	18 դար
Խաչքար Սպահանցի Խաչատուրի և ծնողների՝ Ղազարի, Տիխանի	18 դար
Դարպաս	1863 թվական
Եկեղեցի Սբ. Սարգիս	1842 թվական,
Չանգակատուն	1998 թվական
Խաչքար	1511 թվական
Խաչքար	16 դար
Խաչքար	16 դար
Խաչքար	16 դար
Տապանաքար	16 դար
Տապանաքար	16 դար
Տապանաքար Պարոն Մարգարի	1583 թվական
Տապանաքար Զուղայեցի Տիրացու Պետրոսի	1624 թվական

Իուլյարձան	կառուցված
Չորանոցային համալիր Երևանի բերդի	1582 թվական– 20 դար սկզբ
Պարիսպ	16-17 դարեր
Թանգարան. Ժողովրդական ստեղծագործության պետական թանգարանը (Ժողովրդական ստեղծագործության տուն)	1941 թվական
Թատրոնի շենք. Գաբրիել Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը	1966 թվական
Բարձրաքանդակներ	1966 թվական
Բարձրաքանդակ «Հուշկապարիկ»	1976 թվական
Հուլյարձան Գաբրիել Սունդուկյանի	1972 թվական
Պաննո «Հայաստան»	1965 թվական
Ինստիտուտի շենք. Անասնաբուժական - անասնաբուժական ինստիտուտը	1928 թվական
Ինստիտուտի շենք. Մարքսիզմ - լենինիզմի հայկական ինստիտուտը	1949 թվական
Ինստիտուտի շենք. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (մատենադարան)	1957 թվական
Խճանկար «Ավարայրի ճակատամարտ» («Վարդանանք»)	1960 թվական
Որմնանկարներ «Հայ մշակույթի պատմություն»	1959 թվական
Հուլյարձան Անանիա Շիրակացու	1963 թվական
Հուլյարձան Գրիգոր Տաթևացու	1967 թվական
Հուլյարձան Թորոս Ռոսլինի	1967 թվական
Հուլյարձան Մեսրոպ Մաշտոցի	1962 թվական
Հուլյարձան Մխիթար Գոշի	1967 թվական
Հուլյարձան Մովսես Խորենացու	1964 թվական
Հուլյարձան Ֆրիկի	1967 թվական

հուշարձան	կառուցված
Բացօթյա ցուցադրություն	մ.թ.ա. 2-1 հզ, 14-17 դարեր
Կոթող «Դուռ»	մ.թ.ա. 7 դար
Խաչքար	1294 թվական
Խաչքար Խաչատուրի	1545 թվական
Խաչքար Հախնազար Աղայի	1596 թվական
Խաչքար Մարիանի	1604 թվական
Տապանաքար	17 դար
Վիշապաքար	մ.թ.ա. 2-1 հզ
[[Մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ Ծննդատան շենք. Պարթև Մարգարյանի անվան Մոր և մանկան առողջության պահպանման հայկական գիտահետազոտական կենտրոնը]]	1931 թվական. 1936-1939 թվականներ
Կամուրջ «Երևան-Սևան» երկաթուղու	1935 թվական
Կամուրջ «Կարմիր» (Հրազդանի հին կամուրջ), (Խոջա Փլավի)	1679 թվական
Կամուրջ «Հաղթանակի»	1939-1961 թվականներ
Կամուրջ Նորբի (Գետառի)	1664 թվական
Կայան Տրանսֆորմատորային	1930 թվական
Համալսարանի համակառույց. Երևանի ճարտարագիտական և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանները	1932-1964 թվականներ
Մասնաշենք՝ առաջին	1932 թվական, 1935 թվական
Մասնաշենք՝ երկրորդ	1935 թվական
Մասնաշենք՝ երրորդ (գլխավոր)	1955 թվական, 1959 թ, . 1964 թվական
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված պոլիտեխնիկականներին	1981 թվական

հուշարձան	կառուցված
Համալսարանի համակառույց, Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանը	1927-1955 թվականներ
Անատոմիկումի շենք	1927 թվական
Մասնաշենք գլխավոր	1938 թվական, 1950-ական թվականներ
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհված բժշկական ինստիտուտի հիմքերին	1972 թվական
Համալսարանի շենք. Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքը	1965 թվական
Ժայռապատկերներ	մ.թ.ա. 5-3 հզ
Խաչքար՝ Արցախում զոհված մտավորականներին և ԵՊՀ ուսանող-ազատամարտիկներին	1996 թվական
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված համալսարանականներին	1979 թվական
Հուշարձան՝ Մովսես Խորենացու	1996 թվական
Հանդիսատեսային շենք. Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը	1977 թվական
Բարձրաքանդակներ	1977 թվական
Հանրակացարանի շենք Անասնաբուժական - անասնաբուժական ինստիտուտի հանրակացարանը	1930 թվական
Հիդրոէլեկտրակայանի շենք. Երևանի առաջին ՀԷԿ-ը	1926 թվական
Հիվանդանոցային շենքերի համակառույց	1917-1960 թվականներ
Ինստիտուտի շենք. Ֆիզիոթերապիայի ինստիտուտը	1930 թվական, 1932 թվական, 1939 թվական
Հիվանդանոցի շենք. մանկաբարձության և գինեկոլոգիայի հիվանդանոցը	1929 թվական
Ակնաբուժարանի շենք	1929 թվական
Հիվանդանոցի շենք. Քաղաքային հիվանդանոցը	1917-1922 թվականներ

հուշարձան	կառուցված
Հիվանդանոցի շենք. Մանկական հիվանդանոցը	1939 թվական, 1975 թվական
Հրապարակի համալիր. Ազատության հրապարակը	1924-1939 թվականներ
Գերեզման Ալեքսանդր Սպենդիարյանի	1928 թվական, 1966 թվական
Հուշարձան «Մուսա»	1963 թվական
Հանդիսատեսային շենք. Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը և «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահը	1940 թվական, 1953 թվական
Հուշարձան Հովհաննես Թումանյանի	1957 թվական
Հուշարձան՝ Արամ Խաչատրյանի	1999 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Սպենդիարյանի	1957 թվական
Հրապարակի համալիր. Հանրապետության Հրապարակը	1926-1977 թվականներ
Հյուրանոց «Արմենիա»	1958 թվական
Մշակույթի տուն. Արական գիմնազիայի (Հայհամերգի փոքր դահլիճ) և թանգարանների շենքը	1916 թվական
Վիտրաժ «Հայաստան»	1965 թվական
Վարչական շենք. Արհմիությունների տունը և Կապի Նախարարությունը	1956 թվական
Վարչական շենք. Կառավարական տունը (ՀՀ Նախարարների խորհրդի շենք)	1929 թվական 1941 թվական 1952 թվական
Վարչական շենք. Կառավարական երկրորդ տունը	1955 թվական
Բանկի շենք. Գյուղատնտեսական բանկը և Գյուղբանկի աշխատողների բնակելի տունը	1927-1930 թվականներ
Բանկի շենք. Թիֆլիսի առևտրական բանկը	1910 թվական
Բնակելի տուն Ստեփան Տիգրանյանի	1910-ական թվականներ
Դատարանի շենք. Գերագույն դատարանը	1936 թվական

Խուշարձան	կառուցված
Հուշարձան Ստեփան Շահումյանի	1931 թվական
Հրապարակ՝ Անդրեյ Սախարովի անվան	1850– 1860 թվականներ, 1924 թվական, 1960- ական թվականներ
Բնակելի տուն	1930 թվական
Հրշեջ կայան. Կամավոր հրշեջ ընկերության շենքը (Հրշեջ դեպո)	1930 թվական
Հուշարձան՝ Անդրեյ Սախարովի	2000 թվական
Վարչական շենք. Արթուրյան պալատը և Նահանգական գանձատունը	1901 թվական
Վարչական շենք. Երկրաբանական վարչության նախկին շենքը	1930-1933 թվականներ
Հուշակոթող՝ Վախթանգ Անանյանի	1982 թվական
Հուշակոթող՝ Հրաչյա Աճառյանի	1982 թվական
Հուշակոթող՝ Թորոս Թորամանյանի	1985 թվական
Հուշահամալիր՝ Մեծ եղեռնի զոհերին	1967 թվական
Գերեզման՝ Մովսես Գորգիսյանի	1990 թվական
Գերեզման՝ Սամվել Գևորգյանի	1992 թվական
Գերեզման՝ Էդիկ Մարկոսյանի	1990 թվական
Գերեզման՝ Մուշեղ Մխչյանի (Վոժդ)	1991 թվական
Գերեզման՝ Երվանդ Սաղումյանի (Երո)	1990 թվական
Խաչքար՝ Բաբկի 1990 թվական զոհերի հիշատակին	1990 թվական
Խաչքար Գանձակի 1988 թվական նահատակներին	1988 թվական
Խաչքար Սումգայիթի 1988 թվական զոհերի հիշատակին	1988 թվական
Հուշակոթող	1965 թվական
Հուշարձան Մեծ եղեռնի զոհերին	1967 թվական
Թանգարան Հայոց ցեղասպանության	1995 թվական

հուշարձան	կառուցված
Հուշաղբյուր՝ Երևան և Կարրարա քաղաքների բարեկամության	1964 թվական
Հուշաղբյուր Մեծ եղեռնի և Սպիտակի 1988 թվական դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերին	1990 թվական
Հուշաղբյուրներ՝ Խորհրդային Միության երիտասարդ հերոսներին	1949 թվական
Հուշաղբյուր Սայաթ-Նովային	1963 թվական
Հուշասալ Երկրորդ աշխարհամարտում զոհված պիոներներին	1985 թվական
Հուշարձան՝ Խաչատուր Աբովյանի	1950 թվական
Հուշարձան՝ Խաչատուր Աբովյանի	1955 թվական
Հուշարձան՝ «Բարեկամության ձեռքեր»	1965 թվական
Հուշարձան Վալերի Բրյուսովի	1966 թվական
Մաքսիմ Գորկու դիմաքանդակ	1967 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Գրիբոյեդովի	1973 թվական
Հուշարձան՝ Լեոնիդ Ենգիբարյանի	1995 թվական
Հուշարձան՝ «Էրեբունի-Երևան» («Կենաց Ծառ»)	1970 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Թամանյանի	1974 թվական
Հուշարձան՝ Ավետիք Իսահակյանի	1965 թվական
Հուշարձան՝ Ստեփան Լիսիցյանի	1982 թվական
Հուշարձան՝ Աղասի Խանջյանի	1987 թվական
Հուշարձան Կոմիտասի	1988 թվական
Հուշարձան՝ Կարո Հալաբյանի	1997 թվական
Հուշարձան՝ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման 20-ամյակին (Կարմիր բանակի մարտիկներին)	1940 թվական
Հուշարձան՝ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման 30-ամյակին	1950 թվական

հուշարձան	կառուցված
Հուշարձան՝ «Հավերժական կրակ» (Հայաստանում հորհրդային կարգերի հաստատման համար զոհված մարտիկների հուշարձան)	1960 թվական
Հուշարձան՝ Վարդան Մամիկոնյանի	1975 թվական
Հուշարձան՝ Վլադիմիր Մայակովսկու	1974 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Մյասնիկյանի	1980 թվական
Հուշարձան՝ Ասբանազ Մռավյանի	1956 թվական
Հուշարձան՝ Միքայել Նալբանդյանի	1965 թվական
Հուշարձան՝ Միքայել Նալբանդյանի	1985 թվական
Հուշարձան՝ Նար Դոսի	1956 թվական
Հուշարձան՝ Արշավիր Շավարշյանի	1965 թվական
Հուշարձան՝ Եղիշե Չարենցի	1985 թվական
Հուշարձան՝ Անտոն Չեխովի	
Հուշարձան՝ «Պեպո»	1976 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Պուշկինի	1949 թվական
Հուշարձան՝ Մարտիրոս Սարյանի	1986 թվական
Հուշարձան՝ Նելսոն Ստեփանյանի	1950 թվական
Հուշարձան՝ Վաղարշ Վաղարշյանի	1983 թվական
Հուշարձան՝ Վահան Տերյանի	1999 թվական
Հուշարձան՝ Արմեն Տիգրանյանի	1987 թվական
Մանկապարտեզի շենք. Երևանի կայազորի մանկապարտեզը	1951 թվական
Մարզադաշտ. Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտը	1953 թվական. 1963 թվական
Մարզահամերգային համալիր. «Կարեն Դեմիրճյան» մշակույթի կենտրոնը	1984 թվական
Բարձրաքանդակներ	1984 թվական

հուշարձան	կառուցված
Մզկիթ Աբաս Միրզայի (Սարդարի)	19 դար սկզբ
Մզկիթ «Կապույտ» (Գյոյ մզկիթ)	1766 թվական
Մշակույթի տուն. Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տունը	1970 թվական
Հուշարձան Տիգրան Պետրոսյանի	1989 թվական
Շուկայի շենք. Կենտրոնական ծածկած շուկան	1952 թվական
Որմնակար «Հայաստան»	1982 թվական
Պալատ պիոներների և դպրոցականների (քաղաքային Պիոներ - պալատ)	1938 թվական
Պոլիկլինիկայի շենք	1954-1955 թվականներ
Ջրանցույց	1950 թվական
Ջրանցք՝ Մամոնի	մ.թ.ա. 7 դար, 1031 թվական
Սառցակոմբինատ	1950 թվական
Ստեղծագործական միության շենք. Հայաստանի գրողների միությունը (գրողների տունը)	1954 թվական
Ստեղծագործական միության շենք. Հայաստանի կոմպոզիտորների միությունը (կոմպոզիտորների տունը)	1955 թվական
Ստեղծագործական միության շենք. Հայաստանի ճարտարապետների միությունը (Ալ. Թամանյանի անվան Հայաստանի ճարտարապետի տունը)	1958 թվական
ՀՀ Նախագահի նստավայր	1958 թվական
Վարչական շենք Դեղատների գլխավոր վարչության	
ՀՀ Ազգային ժողովի շենք	1949-1950 թվականներ
Վարչական շենք ՀՀ Ազգային անվտանգության նախարարության	1936 թվական
Վարչական շենք «Հայէներգո»-ի գլխավոր վարչության	1940 թվական
Վարչական շենք. Փոխադարձ վարկի ընկերությունը	1912 թվական

Խուշարձան	կառուցված
Վարչական շենք. Քաղաքային ոստիկանության վարչությունը	1908 թվական
Վիշապաբար	մ.թ.ա. 3-2 հզ
Տուն-թանգարանի շենք. Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը	1949-1953 թվականներ
Բարձրաքանդակ՝ Հովհաննես Թումանյանի	1971 թվական
Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան	1946 թվական, 1963 թվական
Արամ Խաչատրյանի տուն-թանգարան	1980 թվական
Հակոբ Կոջոյանի և Արա Սարգսյանի տուն-թանգարան	1936 թվական, 1973 թվական, 1981 թվական
Խաչբար՝ Ասլիգատի	1601 թվական
Հուշակոթող՝ Հակոբ Կոջոյանին և Արա Սարգսյանին	1981 թվական
Եղիշե Չարենցի տուն-թանգարան	1935 թվական, 1975 թվական
Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան	1935 թվական, 1967 թվական
Սերգեյ Փարաջանովի թանգարան	1991 թվական
Ուսումնական հաստատության շենք. Երևանի ուսուցչական սեմինարիան	1905 թվական
Գերեզման Հակոբ Մանանդյանի	1952 թվական, 1971 թվական
Փողոցի կառուցապատման հատվածներ. Աբովյան փողոցը 1	1860–ական թվականներ - 20-րդ դար
Ակումբ Կառուցողների	1932 թվական
Թատրոնի շենք. Կոնստանտին Ստանիսլավսկու անվան Ռուսական դրամատիկական թատրոնը	1932 թվական
Վարչական շենք. Սպորտկոմիտեն և ֆիզկուլտուրայի կենտրոնական տունը	1932 թվական
Հանրախանութ «Մանկական աշխարհ»	1936 թվական

հուշարձան	կառուցված
Շ. Ազնավուրի անվան հրապարակ	
Կինոթատրոն «Մոսկվա»	1936 թվական
Բարձրաքանդակներ «Չապաև», «Պեպո», «Դավիթ Բեկ», «Պար», «Սայաթ-Նովա», «Բեմ»	1936 թվական, 1986 թվական
Հյուրանոց «Երևան»	1927 թվական
Ստեղծագործական միության շենք. Հայաստանի նկարիչների միությունը («Նկարչի տուն»)	1958 թվական
Փողոցի կառուցապատման հատվածներ. Աստաֆյան փողոցը	1860-ական թվականներ-20 դար սկզբ
Բնակելի տուն և բուժարան Տեր-Ավետիքյանի	19 դար վրջ
Խանութ Մելիք-Օհանջանյանի	19 դար վրջ
Բնակելի տուն և բուժարան Հովհաննես Հովհաննիսյանի, կոչվում է նաև 1944-ից այստեղ գտնվող «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության» անունով («ԱՕԿՍ-ի շենք»)	1914-1917 թվականներ
Բնակելի տուն Եգոր Խանզադյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Բարսեղ Եղիազարյանի	1884 թվական
Բնակելի տուն Գրիգոր Եղիազարյանի	1884 թվական
Բնակելի տուն Գրիգոր Ամիրյանի	19-րդ դար
Բնակելի տուն Գրիգոր Ամիրյանի	19-20 դարեր
Բնակելի տուն Հովհաննես Գրիգորյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Մկրտիչ Ենգիբարյանի	1898 թվական
Բնակելի տուն Ստեփան Սողոմոնյանի	1890-ական թվականներ
Բնակելի տուն Հովհաննես Տեր-Մկրտչյանի	19-րդ դարի վերջ- 20 դարի սկիզբ
Բնակելի տուն Գևորգ Անտոնյանցի	1890-ական թվականներ
Բնակելի տուն Գաբրիել Աբրահամյանի	19-րդ դարի վերջ

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն Վաղարշակ և Հակոբ Բաբախանյանների	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Երեմ Սանահյանի	1894 թվական
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Կարապետ Աբրահամյանի	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Գործարանի շենք՝ Համբարձում Սողոմոնյանի կոնյակի գործարանը	1890-ական թվականներ-1910 թվական
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Արմենակ Մելիքյանցի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Աղաջան Աֆրիկյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն՝ Լավրենտի Ֆոտինովի	19-20 դարեր
Բնակելի տուն՝ Առաքել Աֆրիկյանի	20-րդ դարի սկիզբ
Որմանակար	
Բնակելի տուն՝ Գեղամ Մնացականյանի	1898 թվական
Բնակելի տուն՝ Էմին Տեր-Գրիգորյանի	1890-ական թվականներ
Բնակելի տուն՝ Հակոբ Բոշնադյանցի	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Հովհաննես Օհանյանի	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Փողոցի կառուցապատման հատվածներ. Հին Կազարմայի փողոցը	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Գործարանի համալիր. Դավիթ Սարաջյանի Գինու-կոնյակի գործարանը	1896-1906 թվականներ
Բնակելի տուն	1896-1906 թվականներ
Գործարան Սպիրտի թորման	1896 թվական
Պահեստի շենք	1896-1906 թվականներ
Ուսումնական հաստատության համակառույց. Արական գիմնազիան	1896 թվական
Մասնաշենք	1896 թվական
Ուսումնական հաստատության շենք. Հռիփսիմյան իգական գիմնազիան	1898 թվական, 1905 թվական
Փողոցի կառուցապատման հատվածներ. Նահանգական փողոցը	1889 թվական-20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Եսաայանի (Եսաայանի պահածոյի գործարան)	1911 թվական
Բնակելի տուն՝ Կարլ և Վիլհելմ Գիլներների	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Ն. Հովհաննիսյանի	1890-ական թվականներ
Բնակելի տուն՝ Արտեմ Զալայանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Վ. Մկրտչյանի	1896 թվական
Բնակելի տուն՝ Երվանդ և Իսահակ Տեր-Ավետիքյանների	1905 թվական
Բնակելի տուն՝ Միխայիլ Ֆոն դեր Նոնների	1895 թվական
Մասնաշենք	1898 թվական
Բնակելի տուն (Նահանգապետի գրասենյակը)	1905 թվական

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	19-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Վարչական շենք Նահանգապետարանի	20-րդ դարի սկիզբ
Մասնաշենք	20-րդ դարի սկիզբ
Որմանակարներ	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Աֆրիկյանների	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Փողոցի կառուցապատման հատվածներ. Տեր-Ղուկասովի փողոցը	1870-ական թվականներ-20-րդ դարի սկիզբ
Ակումբի շենք. Քաղաքային ակումբը (Ձանփոլադյանի թատրոն), (սպայի տուն)	1883 թվական
Որմանակարներ	
Գործարանի շենք. Գիլանյանի լիմոնադի գործարանը	1909-1911 թվականներ
Փողոցի կառուցապատման հատվածներ. Ցարական փողոցը	1860-ական թվականներ-20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Փանոս Սողոմոնյանի	1882 թվական
Բնակելի տուն Ֆադեյ Քալանթարյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Չարմայր Անդրեասյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն Խաչատուր Թադևոսյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն Գեղամ Թադևոսյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն Ֆադեյ Թադևոսյանի	1910-ական թվականներ
Բանկի շենք. Բանկի Երևանի բաժանմունքը	1902 թվական

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն Ագիգյանների	1890-ական թվականներ
Բնակելի տուն Մկրտիչ Տեր-Օհանյանի	1900-ական թվականներ
Բնակելի տուն Մկրտիչ Մկրտչյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Սարգիս Հախնազարյանի	1895-1898 թվականներ
Քանդակ «Լեռնեցիների պարը»	1984 թվական
Քանդակ «Ջրավաճառ պատանին» («Երևանի Սառը Ձուրը»)	1970 թվական
Քանդակ «Վանեցի աղջիկը»	1975 թվական
Քանդակ «Վերածնված Հայաստան»	1985 թվական
Քարայր-կացարան Այգեձոր-1	բարի դար, մ.թ.ա. 20-16-րդ դարեր 14-16 դարեր
Քարայր-կացարան Այգեձոր-2	չորրորդական շրջան, մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16 դարեր
Քարայր-կացարան Այգեձոր-3	մ.թ.ա. 20-16-րդ դարեր 14-16 դարեր
Քարայր-կացարան Ծիծեռնակաբերդ-1	մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16-րդ դարեր
Քարայր-կացարան Ծիծեռնակաբերդ-2	մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16-րդ դարեր
Քարայր-կացարան Ձորագյուղ-1	ուշ միջնադար
Քարայր-կացարան Ձորագյուղ-2	ուշ միջնադար
Քարայր-կացարան Ձորագյուղ-3	16-18-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-1	միջին բարի դար, 15-16-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-2	բարի դար, մ.թ.ա. 30-15-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-3	միջին բարի դար, մ.թ.ա.

հուշարձան	կառուցված
	1-ին հզ, բրոնզի դար, 13-14 դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-4	16-17-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-5	16-17-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-6	14-16-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-7	14-16-րդ դարեր
Ֆաբրիկայի շենք. Կարի ֆաբրիկան	1930 թվական
Բնակելի տուն՝ Գաբրիել Գաբրիելյանցի	1909-1914 թվականներ
Առանձնատուն («Դերասանի տուն»)	1954 թվական
Հուշարձան Ալ. Սպենդիարյանի	1971 թվական
Մզկիթ Թափաբաշի	1687 թվական
Վիշապաքար	Ք.ա. 3-2-րդ հազարամյակ
Տապանաքար	10-17-րդ դարեր
Տապանաքար	16-17-րդ դարեր

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հոդմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը – 20.6 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +41.9 °C: Տարեկան տեղումների քանակը 354մմ: Տվյալները ներկայացված են համաձայն Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024 նորմատիվային փաստաթղթից:

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև-ութար. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Արաբկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև-ութար. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների												Տարեկան		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Արաբկիր»	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354	153	201
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Քամի


Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնճում, (հ Պա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագություն, մ/վ								Անհոլությունների կրկնելիություն, %	Միջին ամսական	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով(≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում		
			Հյուսիս սայն (Հս)	Հյուսիս- Արևելյան (ՀսԱրլ)	Արև ելյան (Արլ)	Հարավ- Արևելյան (ՀվԱրմ)	Հարավ (Ավ)	Հարավ- Արևմտյան (ՀվԱրմ)	Արև մտյան (Արմ)	Հյուսիս- Արև մտյան (ՀսԱրմ)					20	50	100
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							

Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:


Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:




Գծապատկեր 18. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2024 թվականի 4-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:




Գծապատկեր 19. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների


2024 թվականի 4-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:




Գծապատկեր 20. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների




Գծապատկեր 18. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Գծապատկեր 19. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (ֆոն), մգ/մ3
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

2.3 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից, որի տվյալները 2022 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:


ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ

դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:


ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արզել գյուղից ներքև հատվածում՝ հոկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի, Գեղանիստ գյուղի և Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում՝ հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս) տվյալները ներկայացվել են 2024թ ամփոփ տեղեկագրի վերջին եռամսյակի համաձայն:



Գծապատկեր 62. Հրազդան գետում ամռնելու իրի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 63. Հրազդան գետում ֆոսֆատ իրի կոնցենտրացիաների փոփոխությունները

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.4 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.5 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության ընթացքում հիմնային աշխատանքներ չի նախատեսվում, կիսավարտ շինությունը կքանդվի մինչև հիմքեր ապա կիրականացվի նոր կառուցապատում:

2.6 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuifolia*, *Ziziphora persica*, *Alyssum desertorum*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostrata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆեմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Asperuginoides axillaris* (Բուխինգերա անոթային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարաձեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեւալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության

իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին էլ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեիմաշկեղը), միջատակերներ (Hemiechinus auritus, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodrymadusa armeniaca* (ծղրիղներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տեսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիի պայտաքիթ), (*Barbastella leucomelas*), Ասիական լայնականջ չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթև չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus galicus galicus*) Եվրոպական օձակերը, (*Merops superciliosus persicus*) Պարսկական կանաչ մեղվակերը, (*Sylvia nisoria nisoria*) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (*Luscinia svecica occidentalis*), Իրանական կապտափողը, (*Remiz pendulinus menzbieri*) Իրանական սովորական ճոճհավը եւ այլն, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարաթև սցնիկը, (*Mabuya aurata*) Ոսկեգույն մաքույա, (*Elaphe hohonaekeri*) Անդրկովկասյան սահնօձ:

2.8 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

- Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝
1. կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսկավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/, ծածկագիրը՝ 9120040001004/՝ 6,8 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր,
 2. Շինարարական աղբ՝ 370 խմ /ծածկագիրը՝ 9120060101004/ (այդ թվում շինությունների քանդումից առաջացող), ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք:
 2. Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 27000 խմ ծավալով, կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:
 3. Եռակցման աշխատանքներից առաջացող «Եռակցման խարամ» 0,15տ շին. ընթացքում: Ծածկագիրը՝ 3140480001994: Վտանգավորության դասը՝ 4:
 4. «Յուղոտված լաթեր»: Ծածկագիրը՝ 5820060001014: Վտանգավորության դասը՝ 4: Թափոններն առաջանում են սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների շահագործման և վերանորոգման ընթացքում: Յուղոտված լաթերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խնաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով: Թափոնի գոյացման չափաքանակը հավասար է 0.12 շին.ընփացքում:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Շինարարական հրապարակի մուտքը և ելքը կազմակերպված է և Դեմիրճյան փողոցի կողմից և հողամասի հետնամասից:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՄԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx);
- Եռակցման աշխատանքների ընթացքում աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումներ;

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով;
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամի անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ եղանակ, թանձր մառախուխ, ամպրոպ) իհայտ գալու դեպքում՝ ըստ իրավիճակի, կիրառվում են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի քանակի և հաճախականության ավելացում,
- աշխատանքի տևողության կրճատում,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալների նվազեցում,

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Շինհրապարակից ելքի ժամանակ տեխնիկական միջոցների Karcher-ի միջոցով անվադողերի լվացումից առաջացած հոսքաջրերը և անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանները գտնվում են շինարարական հրապարակին կից, ցածրադիր հատվածներում իրենցից ներկայացնում են պլաստմասե 2 հատ 50 խմ ծավալով տարողություններ, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 1000 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ

տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն

կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյունների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

- Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինարարական հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում արտադրական շենքում նախատեսվում է.
- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

ՇԻՆԱՐԱՊԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էկսկավատորը, իսկ ավարտին գլղոնը: Միաժամանակ այս շինտեխնիկական չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ:

Էկսկավատորը աշխատելու է 4 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլղոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 2 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200 կգ/քմ: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m \text{ է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/քմ}$$

$$I_{աղ} = 13 \lg m \text{ է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/քմ}$$

$$\Omega_{րտեղ} m \text{ է} = Km - \text{մակերեսի խտության էկվիվալենտն է,}$$

$$m - \text{մակերեսի խտությունն է, կգ/մ}^2,$$

$$K - \text{գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը } 200 \text{ կգ/քմ}$$

$$K=1,3 \text{ m է} = 1,3 \times 200=260$$

$$L_{աղ} = 13 \lg m \text{ է} - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հաղիսանում են որպես պաշտպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RUտ ըստ աղուսյակ 2՝ կազմում է միջին 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

Գլոբնի համար $LA_{տար} = LA_{էկվ} - L_{ադ} = 80 - 16,8 - 50 = 13,2$ դԲ

Մոտակա շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլոբնի 13,2 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթռման արագացում		Թրթռման արագություն	
	մ/վրկ ² .10 ⁻³	դԲ	մ/վ .10 ⁻³	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բազմաբնակարան բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ, տեղադրել նաև առցանց չափիչ սարք:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Հարակից տարածքներում կեղսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:
7. Երևանի ավագանու որոշման համաձայն շինարարական հրապարակում կտեղադրվեն փոշու առցանց չափող սարքեր:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2650000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	39x35000	1680000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	13x25000	325000
Կենսաբազմազանության մոնիթորինգ	12*15000	180000
Ամբողջ շինարարության համար		2585000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝ - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս; - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով; - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով; - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ, - հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, - ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով: - պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական

		վիճակը և իրականացնել կարգադրում: Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամի անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ եղանակ, թանձր մառախուխ, ամպրոպ) իհայտ գալու դեպքում՝ ըստ իրավիճակի, կիրառվում են հետևյալ միջոցառումները. - ջրցանի քանակի և հաճախականության ավելացում, - աշխատանքի տևողության կրճատում, - կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը, - փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալների նվազեցում,
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգոգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի: (c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը, բարձր ճնշման ջրով (Karcher): Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հետիոտների և երթևեկության	Շինարարական աշխատանքների	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է,

ապահովություն	հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պատենցյալ վտանգների մասին նախագգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատենցներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
Կենսաբազմազանություն	Ծառափային բուսականության վրա	- Բուսականության պահպանում և կառավարում - Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել հարակից տարածքներում ազդեցության ենթարկված

	ազդեցություն	բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով; - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում: - Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի (եթե դրանք առկա են) և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում - Բույսերի կարմիր գրում առկա տեսակներ հայտնաբերելիս առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	- Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում - Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարների բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու

	պահպանում				
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

Կենսաբազմազանություն	Սեփական տարածքի և շինհրապարակի հարակից տարածքի ազդեցության ենթարկված բուսականության ուսումնասիրում	Հարակից տարածք	Արտաքին զննում	Եռամսյակ	Կապալառու
----------------------	--	----------------	----------------	----------	-----------

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ